ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Լուսառատ համայնքի ավագանու N 4 նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎՈՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ ԶԵԿ. Ն. ԹՈՌՈՒՆՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ, (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԻԾՏ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.09.2020 Թ. <<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ ԶԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ /

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ ՋԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ/

4. ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԻ, ԼՈՏԻ ՉԱՓԻ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ՋԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ /

5. ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՋԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ ՋԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ /

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2021թվականի N 12-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Ս/Թ ապրիլի 1-ից վերսկսել Լուսառատ համայնքի , <<ՄԱՆՉՈՒԿ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատանքները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2021թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.09.2020 Թ. <<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Լուսառատ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման հախագիծ) համաձայն հավելվածի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի <<Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)>> գծագրին (այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Աղյուսակ Ա-8.6.1

Լուսառատ համայնքի	հողամասերի նպատակային և	գործառնական	նշանակությունների փոփոխությունները Ձև 1	
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և /կամ/ գործառնական նշանակությունը	մակերես (հա)
1	2	3	4	5
	Առաջնահերթ միջոցառումներ /1-5 տարի/			
	Գյուղատնտեսական հողերից՝	4.29		
			Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	4.29
5	Այլ հողեր	0.50	Գյուղատնտեսական, արտադրական	0.50
6	Այլ հողեր	3.79	Ընդերք օգտագործման	3.79
	Բնակավայրի հողերից՝	0.91		
			Բնակավայրերի	0.91
1	Ընդհանուր	0.56	Հասարակական կառուցապատման	0.56
2	Այլ հողեր	0.15	Տնամերձ	0.15

			կառուցապատման	
3	Այլ հողեր	0.15	Տնամերձ կառուցապատման	0.15
4	Այլ հողեր	0.05	Տնամերձ կառուցապատման	0.05

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14[3]
հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Անվավեր ճանաչել Լուսառատ հանայնքի ավագանու 04.09.2021 թ. <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 Միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագիծը հաստատելու մասին>> N 31-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**